ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ՀՀ Լոռու մարզպետի 14 դեկտեմբերի 2022թ., թիվ 872-Ա որոշմամբ՝
Որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **ՌՈՄԱՆ ՇԱՔԱՐՅԱՆ**

2023թ. հունվարի 30
ք.Թումանյան

Հավելված.
Համայնքի ղեկավարի
2023թ. հունվարի 30-ի
թիվ 21-Ա որոշման

Պ Լ Ա Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխա-նատու	Կատարող-ներ	Մասնակիցներ	Նշում-ներ
1	2	3	4	5	6	7
4.Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ						
4.3	Մասնակցություն ՀՀ Լոռու մարզի տարածքում հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորման ու զարգացման ուղղությամբ աշխատանքների իրականացմանը	Տարվա ընթացքում	Լոռու մարզպետ, ՄՓՎ պետ	ՄՓՎ ստորաբաժա-նումներ	ՄՓՎ անձնակազմ, Լոռու մարզի համայնքներ	
	1) Հայաստանի Հանրապետության համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Տարվա ընթացքում				
	2) Ավստրիական և Հայկական Կարմիր խաչի ընկերությունների հետ համատեղ գործող 5 հենակետերի կարողությունների զարգացում և 3 նոր հենակետերի ստեղծում	Տարվա ընթացքում				
II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
11. Օպերատիվ տակտիկական պատրաստություն						
11.8 Գործնական պարապմունքներ						
	Թումանյան համայնքի Ահնիձոր բնակավայրում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների	23.06				

	գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ					
	Թումանյան համայնքում «Օդային տագնապի ժամանակ բնակչության պատսպարումը՝ էլեկտրական շչակների գործարկմամբ» թեմայով գործնական պարապմունքներ	24.11				

Հապավումներ՝

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
ԱԻՆ՝ արտակարգ իրավիճակների նախարարություն
ՊՆ՝ պաշտպանության նախարարություն
ՓԾ՝ փրկարար ծառայություն
ՄՓՎ՝ մարզային փրկարարական վարչություն
ՃԿԿ՝ ճգնաժամային կառավարման կենտրոն
ՀՓՋ՝ հրշեջ-փրկարարական ջոկատ
ՃԿՊԱ՝ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա
ԲՊԱՌՆ՝ բնակչության պաշտպանության և աղետների ռիսկերի նվազեցման
ԱԻ՝ արտակարգ իրավիճակներ
ՔՊ՝ քաղաքացիական պաշտպանություն
ԱՌՆ՝ աղետների ռիսկի նվազեցում
ՃՈ՝ ճանապարհային ոստիկանություն
ՀՇՈՒ՝ հրամանատարաշտաբային ուսումնավարժություն
ՇՈՒ՝ շտաբային ուսումնավարժություն
ԲՊ՝ բնակչության պաշտպանություն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՌՈՄԱՆ ՇԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 22-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի,ՀայաստանիՀանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու, <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտիձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 07.11.2022թ. թիվ 145 դրական եզրակացությունը,Թումանյան համայնքի ավագանու 26.01.2023թ.թիվ 5-Ա որոշումը և քաղաքացիներ Մանվել Հախվերդյանին,Գագիկ Հախվերդյանին և Գոհար Համբարյանի կողմից վճարված կադաստրային արժեքների տարբերության համար բանկ վճարված անդորրագիրը՝

Որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի Դսեղ գյուղիվարչականտարածքումգտնվող քաղաքացի Մանվել Հախվերդյանին,Գագիկ Հախվերդյանին և Գոհար Համբարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 06-035-0105-0002 կադաստրային ծածկագրով 0.2274 հա մակերեսով խոտհարքը փոխադրելու բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի գործառնական նշանակությանև 06-035-0108-0103 կադաստրայ ին ծածկագրով 0.2286 հախոտհարքը փոխադրելու բնակավայրերի հողերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի գործառնական նշանակության

2.Քաղաքացի Մանվել վերդյանին, Գագիկ Հախվերդյանին և Գոհար Համբարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ Թումանյան համայնք գյուղ Դսեղ բնակավայրերի հողերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասին՝ (ծած.՝06-035-0105-0002) մակերեսի չափը՝ 0.2274 հա տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Դսեղ, 1հողամաս) հասցե.

3.Քաղաքացի Սանվել Հախվերդյանին, Կագիկ Հախվերդյանին և Կոհար Հասբարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ Թումանյան համայնք , գյուղ Դսեղ բնակավայրերի հողերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասին՝ (ծած.՝06-035-0108-0103) մակերեսի չափը՝ 0.2286 հա տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Դսեղ, 2 հողամաս) հասցե:

4.Սույն որոշում ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով ժամկետներում կատարել համապատասխան փոփոխություններ համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

5. Նշված հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ,ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում,հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը և փոփոխված նշանակությամբ համապատասխան օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրից:

8.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 19.01.2023թ. N 15-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՌՈՄԱՆ ՇԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 23-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով քաղաքացի Աստղիկ Հարությունի Հովսեփյանի դիմումը, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ 1447568 տրված 30.06.2004թ.և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ՝

1. Աստղիկ Հարությունի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Դսեղ (ծած.06-035-022-000035) բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ. Դսեղ, 18-րդ փողոց, 5 բնակելի տուն:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 18.01.2023թ. N 14-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՌՈՄԱՆ ՇԱՔԱՐՅԱՆ